

635.12
Տ - 72

Հ. ՅԵՐՎԱՆԴՈՒՆԻ

ԿԱՐՏՈՓԵԼԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՊԵՏՈՒԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1932

11 APR 2013

30 JUL 2010

Հ. ՅԵՐՎԱՆԴՈՒՆԻ

635.12

36-73


Ա.

ԿԱՐՏՈՓԻԼԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

0008
34327

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ - 1932



ԿԱՐՏՈՒԹԻՒՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Վորպես սնունդի աղբյուր կարտոֆիլը ամենաշատ տարածված
ու ամենաշատ արտադրվող պալարապտուղն և հանդիսանում ամ-
բողջ աշխարհում:

Վիճակագրական տեղեկությունները ցուց են տալիս, վոր
ավելի շատ կարտոֆիլ և արտադրվում քան հացահատիկալին
քուլսերից յուրաքանչյուրն առանձին, առանձին վերցրած:

Կարտոֆիլի տարեկան արտադրանքը կազմում է ամբողջ
աշխարհում արտադրվող կարտոֆիլի, ցորենի, գարու, լեգիպտա-
ցորենի, տարեկանի ու վարսակի տարեկան ընդհանուր բերքի
26,5 % ը:

Խորհրդային Միությունը արտադրում է ամբողջ աշխարհի
կարտոֆիլի տարեկան արտադրանքի 23-25 % ը: Այս իմաստով
ֆերմանիայից հետո մեր Միությունը յերկրող տեղն է ըռնում,
իսկ կարտոֆիլի մշակության հատկացված հողերի տարածութ-
յամբ՝ առաջին տեղը ամբողջ աշխարհում:

Կարտոֆիլը վորպես կուտարական բույս ունի մեծ տնտե-
ական նշանակություն: Կարտոֆիլը ոգտագործվում է վոպես
սնունդ թե մարդկանց և թե կենդանիների համար: Կարտոֆիլից
պատրաստում են ոսլա, սպիրո և պատոկա: Վորպես սնունդ
գենդանիների ոգտագործվում են վոչ միայն պալարները՝ այլ և
վեգետացիոն մասերը (ցողուն, տերե) սիլոսացման միջոցով:

Վորպես սնունդի աղբյուր կարտոֆիլը շատ հարուստ է ու-
գալով: Կարտոֆիլի 78, 8 % ը ջուր ե, 17,4 % ը ոսլա, 2,2 % ը
սպիտակուցային նյութեր, 1,1 % ը՝ հանքալին աղեր, 0,4 % ը
բջջաթաղանթ ցելուլուլ և 0,1 % ը ճարպային նյութեր:

Ինչպես տեսնում ենք ջրից հետո կարտոֆիլի ամենախոշոր
տոկոսը ոսլան և կազմում: Իսկ ոսլան սնունդի կարևոր և ըս-
պիրտի պատրաստության ամենահիմնական աղբույրն եւ:

Պետրատի տպարան
Գլավիտ 7491 (բ.)
Հրատարակ. 2210
Գատվեր 1684
Տիրաժ 3000



ԱՐԲԱԳՐԵՐԻՆ՝ Ոն. Գասարչյան և Իազը. Աղամյան

Արտադրության և հանձնված 13/Վ

Տպագրության և հանձնված 4/VI

1932 թ.

1932 թ.

Կարտոֆիլի մշակությունը խոշոր նշանակություն վոչ միայն ժողովրդական սնունդի ապահովման ու ոսլայի, ըստ պերտի արդյունաբերության զարգացման իմաստով, այլ և հսկայական նշանակություն ունի սոցիալիստական անասնապահության զարգացման համար:

Վոչ միայն կարտոֆիլի մասցորդներով ու պալարներով կարելի ին կերակրել կենդանիներին, այլ և նրա վեգետատիվ մասերի սիլոսացումը անասունների կերի բաղա ստեղծելու իմաստով հսկայական ազդակ և հանդիսանալու սոցիալիստական անասնապահության խոշոր ֆերմաների ու սովորությունների ամրացման գործին:

Վերոհիշյալ թվերիցն ու խնդիրներից պարզվում ե, թե անտեսական ինչ խոշոր նշանակություն ունեցող կուլտուրական բուկս և կարտոֆիլը:

Տնտեսական խոշոր նշանակություն ունեցող այս կուլտուրան ավելի ռացիոնալ մշակությամբ իր բարձրագույն թափն ու զարգացումը կստանա, շնորհիվ կուլտուրան թյունների ու խորհրդացին անտեսնությունների, վորոնց պլանային աշխատանքի ու մեխանիզացիայի սիջոցով ավելի արդյունավետ կարելի ին դարձնել կարտոֆիլի մշակությունը մեղ մոտ:

Ցեթե մինչեւ խորհրդայնացումը և դրանից հետո յել ներմիությունը կարտոֆիլի մշակման տեսակետից յերկրորդ տեղն երունել (ընհանուր բերքի իմաստով), ապա ալժմ, շնորհիվ կոլտընտեսությունների ու խորհտնտեսությունների կազմակերպման ու ամրացման, ավելի խոշոր հնաբարվորություն և ստեղծվել բանմատակարարման ու արդյունաբերական խոշոր նշանակություն ունեցող կարտոֆիլի մշակությունը շատ ավելի զարգացնել քան այդ հնարավոր և յեղել մինչեւ այսոր ու մեր միությունը դարձնել կարտոֆիլ մշակող առաջնակարգ յերկերը՝ ինչպես հողամասի տարածության նույնպես և տարեկան ընդհանուր բերքի արտադրության իմաստով:

ԿԱՐՏՈՖԻԼԻ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Կարտոֆիլը գործածության մեջ և յեղել սրանից գեռ հարյուրավոր ասթիճներ առաջ: Դիտականների կարծիքով կարտոֆիլի հալբենիքը Զիլին և (Հարավային Ամերիկա), վորտեղից իսպանական ճանապարհորդների միջոցով նա տեղափոխվել և Յեկ-

րոպա ու մշակվել՝ մասնավորապես Խոպանիալում՝ 16րդ դարու սկզբից: Սակայն կարտոֆիլի ընդարձակ մշակությունը տեղի յետնեցել Յելլոպական լերկրներում միայն 18րդ դարու վեջին կրստից: Կարտոֆիլի տարածումը ու մշակությունը բավական դանդաղ ե տեղի ունեցել: Սակայն ալսոր կարտոֆիլը ամենատարածված ու ամենից աժամանակում աղբույրն և համարվում ամրող աշխարհում:

ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Կարտոֆիլը պատկանում է մորմազգիների ընտանիքին: Այդ ընտանիքին են պատկանում՝ պամիտորը, ծխախոտը, ըիրարը, բադրչանը և այլն: Սրանք բոլորն ել պարունակում են սոլանին կոչված նյութը: Պամիտորի և կարտոֆիլի ցողունն ու տերեները ծաղիկն ու պտուղը իրար շատ են նման:

Կարտոֆիլը աճում է կեսից մինչև $1\frac{1}{2}$ մետր բարձրությամբ: Սա, ի հարկե, կախված ե հողից, կլիմայական պայմաններից ու կարտոֆիլի տեսակից:

Կարտոֆիլի արմատները բարակ են ու թելանման՝ մուգ շագանակույն: Նրանք փնջածն դուրս են գալիս նախ աչքերից դուրս յեկած ցողունների հիմքից, ապա ստորյերկրյա ցողունների բողբոջակետներից վորտեղից դուրս են գալիս նաև ստորյունները ու տարածվում եղողում հորիզոնական զիրքում:

Կարտոֆիլի ցողունը անկյունավոր է, քառանկյունի, բավական ամուր, վողորկ ու խոտանման: Յողունի վրա, հերթադիր ձեռվ դասավորված են կարտոֆիլի աներենները: Տերենները կենաչ փետրածե են, պատաժ մաղմղում հոնում:

Կարտոֆիլի ծաղիկները վողկուզածն դասավորվում են ցողունի վրա: Մաղմղներից տուրաքանչյուրն ունի հինգական բաժակաթերթ, պսակաթերթ ու առեջքներ ու մեկական վարսանդ: Ցուրաքանչյուր ծաղկից առաջ են գալիս բազմաթիվ սերմեր:

Կարտոֆիլի պսակաթերթի գույնը լինում ե սպիտակ, դեղին մուգից բաց մանիչակագույն, բաց վարդագույն և այլն:

Կարտոֆիլի պտուղը՝ կլոր տուփանման և պարունակում 4-100-300 սերմեր: Սակայն ցողունի վրա ալժմ շատ քիչ պտուղներ են առաջ գալիս, գրեթե հազվագյուտ են: Յենթադրվում է, վոր ընտելացված կարտոֆիլի ծաղկափոշին աստիճանաբար գորցը ե բեղմնավորման հատկությունը,

Կարտոֆիլի պալարը, վոր հանդիսանում և սնունդի աղբյուր և վորի համար ել մշակվում ե բույսը, վոչ այլ ինչ երբաց էթե ձեափոխված ցողուն, Պալարները լինում են կլոր, տափակ ու ձվածե ըստ փոփոխակի ժառանգական հատկության: Ցուցաքանչյուր պալարի վրա դասավորված են աչքեր, վորոնք նըման են ցողունի վրայի բողբոջներին: Ցուրաքանչյուր աչք բողբոջից ծլեցման դեպքում, յիթե այս կամ այն պատճառով չեն փչացել—, առաջ են գալիս ծիլեր, վորոնցից ստացվում ե նոր բույս: Աչքերը ավելի շատ են պալարի ծալիքի մասում ճիշտ աշնակեինչպես ցողունի վրա, իսկ ցողունի ծայրը, յուրաքանչյուր բույսի աճման կետն ե համարվում: Պալարի աճող կողմում դասավորված բողբոջները ավելի ակտիվ են ու ավելի դժմացկուն: Նրանք արագ աճող ծիլեր են արտադրում: Պալարները վոչ այլ ինչ են, բույց էթե ստորյերից ստոլոնների ծայրերի ուռուցքներ, ուր ամբարվում են սննդանյութերը: Պալարները ոգտագործվում են թե վորպես կարտոֆիլի բազմացման միջոց:

ԿԱՐՏՈՖԻԼԻ ԱՃՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՏ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ինչպես բույր բույսերի, նոյնպես ել կարտոֆիլի աճման համար խոշոր նշանակություն ունեն հինգ գլխավոր ֆակտրներ՝ հողը, ջուրը, ջերմությունը, սննդանյութերը և լուսը:

Հողը.—Հողի տեսակը խիստ կերպով ազդում է կարտոֆիլի բերքի, պալարների վրակի, հասունացման, կեղեկի գույնի, փայլի, պալարի ձեր ու կազմության և մի շարք հիվանդություններից զերծ լինելու կամ չլինելու խնդիրների վրա:

Թթվե, ավագակավային հողերում կարտոֆիլի վորակը բարձր ե լինում և կեղեկի գույնը պայծառ-փայլուն: Ավագակավային հողերն ավելի քիչ ջրունակություն ունեն քան ծանր, կավային հողերը, հետևալես ավագակավային հողերում աճող կարտոֆիլը ավելի քիչ և լինթակա հիվանդության (վորովհետեւ խոնավությունը քիչ ե, հողն ավելի հարուստ և ողով ու մնկալին հիվանդությունների համար համեմտաբար քիչ նպաստավոր) ու ավելի շուտ և հասնում: Պալարները ձեն ու առատությունը ավելի լուսվ և լինում ավագակավային հողերում քան կավային հողերում, վորովհետեւ ավագակավային հողերն ավելի փիլուն են լինում ու պալարների աճումն ու ձեափորումը ավելի նորմապայմաններում և տեղի ունենում:

Հիմնականում ավելի արդյունավետ ե ու նպաստավոր կարտոֆիլը մշակելը այնպիսի հողերում, վորոնք փիլորուն են ու լավ ողավորվող, ունեն բավականաչափ ջուր կլանելու հատկություն, բնականորեն յենթակա ին դրենաժի, չորանալիս չեն կողտանում ու ջրվելիս ել շուտ ցածաքում են՝ անհրաժեշտ քանակի ջուր պահելով հանդերձ: Այսպիսի հողերն ունենում են կնձկալին կազմություն:

Կարտոֆիլի հողը հալրուստ պիտի լինի սննդարար նյութերով, պիտի ունենա մշակման յենթակա հաստ հողաշերտ:

Հիշյալ պահանջներին բավարարելու տեսակետից համապատասխան հողեր են ու նպատակահարմար կարտոֆիլի մշակման համար ավագակավային ու կավավավազալին հողերը: Սևահողումն ել կարտոֆիլը լավ և աճում ու առատ բերք տալիս, սական ընդհանրապես վերջին տիպի հողերում վեգետացիոն մասերն ավելի առատ են լինում բերքի հետ համեմատած ու ուլալի քանակը պակաս և լինում պալարներում: Կավալին և չափազանց թեթև ավաղային հողերում կարտոֆիլը լավ չի աճում ու բերքը չափանց քիչ և լինում:

Ջուրը.—բույսերի աճման պրոցեսում ջուրը խոշոր գեր և խաղում: Վորափայդի բույսերը կարողանան ոգտագործել հողում ամբարված քիմիական սընդանությերը, անհրաժեշտ և, վոր, այդ նյութերը լինեն լուծված դրության մեջ: Ջուրն հանդիսանում է այն միջավայրը, վորի մեջ լուծվում են այդ նյութերը և մատչելի դառնում բույսերի համար: Ջուրը չափազանց կարեոր և նաև թե վորպես սննդն և թե վորպես փոխադրական միջոց: Տերեներում պատրաստված շաքարային նյութերի տեղափոխությունը լուծված դրությամբ՝ տերեներից գեպի բույսի այլ մասերն ու որգանները ու հողից արմատներում ներծծված քիմիական նյութերի տեղափոխությունը արմատներից գեպի տերեներն ու այլ որգանները կատարվում ե ջրի միջոցով: Բույսերի մեջ ֆիլտրուգիական ու քիմիական պրոցեսների ակտիվությունը ավելի բարձր ե լինում ջրի առատ գոյության դեպքում: Վորքան քիչ և ջրի քանակը, այնքան դանդաղ են տեղի ունենում այդ պրոցեսները: Ջրի գոլարչացումը տերեներից խոշոր չափով կանոնավորում ե բույսի ներքին ջերմությունը ու աղատում բույսը արևահարումից:

Առաջի բույր ինդիքները նկատի ունենալով՝ ջրի քանակը ավել հողում ու շրջանում կարեոր փակառը և դառնում տվյալ բույսի մշակման համար:

Կարտոֆիլի մշակության գեղքում անհրաժեշտ են կատի ունենալ, թե վոռոգման միջոցով հօդին տրվելիք ջրի քանակը և թե անձրևային տեղումների չափը: Արհեստականորեն վոռոգվող շրջաններում, ի հարկե ջրի մատակարարումը մեզանից եւ կախված: Ջրի պակասության դեպքում անհրաժեշտ եւ ավելի ընդլայնել ու ընդարձակել վոռոգման ցանցը, կիրառել արաթ և ճիշտ ագրոտեխնիկական պրիյմեներ:

Սակայն այն շրջաններում, ուր ջրի անհրաժեշտ քանակը ստացվում եւ մասամբ կամ ամբողջովին մթնոլորտային տեղումների միջոցով, ահա արդպիսի շրջաններում ջրի պակասը կարող ե վճռական գեր խաղար:

Ընդհանրապես այնտեղ, վորտեղ մթնոլորտային տեղումների քանակը կարտոֆիլի վեգետացիոն շրջանոմ 350—450 միլիմետրից պակաս չի, այդպիսի վարերում արդյունավետ կերպով կարելի յեւ ու հարավոր կազմակերպել կարտոֆիլի արտադրական բազմաներ:

Կարտոֆիլի վեգետացիայի սկզբում, մինչև պալարների կազմակերպվելը, մասնավանդ սերմացողի ծրման շրջանում, ջրի քանակը հողում առատ չլիտի, լինի, վորովինետն այս շրջանում առատ ջուրը կարող են մնասակար հետևանքներ ունենալ, վորովինետն դրանից կարող են ծիւերը զրկվել ողից և խեղղվել, բացի դա կը դարձանան պալարների հիվանդություններ առաջ բերող սնկերը: Սակայն պալարների կազմակերպման շնչանում, վորը զուգադիպում ե, և տեղի յեւ ունենում ծաղկման շրջանում, ջրի քանակը պիտի լինի առատ, վորովինետն այս շրջանումն եւ վորոշվում բերդատվության հարցը:

Կարտոֆիլի աճման վերջին շրջանում առատ քանակությամբ ջուրը մնասակար ե, վորովինետն նպաստում ե պայտարների փթում առաջ բերող սնկալին հիվանդությունների աճմանը: Վերջին ջուրը պիտի տալ մոտավորապես 1,0—1,5 ամիս բերքահավքից առաջ, նաևած կլիմայտկան պայմաններին, այլապես մինչեւ վերջը ջրվող կարտոֆիլի ջրի տոկոսը բարձր ելինում, ուլայի քանակը՝ համեմատաբար քիչ, բերքի վորակը՝ ցածր ու պալարները ձմեռվանթացքում վատ են պահպում պահեստներում:

ԶԵՐՄՈՒՐՅՈՒՆԻՐ.—Կարտոֆիլը ցուրտ կլիմային դիմացող բույս են և մշակում ե լեռնային շրջաններում, վորոնք 2000—2500 մետր ծովի մակերեսից բարձր են, ուր ջերմությունը համեմատաբար քիչ ե: Գիտական փորձերը ցուց են տվել, վոր այստեղ,

ուր տարեկան ջերմության միջին տատիճանը՝ 7°—10° Ը. ից չի անցնում և ամենատաք բամսկան ջերմության միջինը հավասար ե մոտավորապես 18° Ը.ի, այդպիսի վայրերում կարտոֆիլը վոչ միայն լավ և աճում, այլ և տալիս ե ամենատառած բերքը:

Կարտոֆիլի աճման ամենակրիտիկական ժամենութը ծաղկման շրջանն է: Հենց այդ ժամանակաշրջանումն ե, վոր կազմվում են պալարները: Ահա այս շրջանում վոչ միայն ջերմությունը բարձր ու բավարար պիտի լինի, այլ և հողում գտնվող ջրի քանակը պիտի լինի առատ: Մասնավորապես այս շրջանում հողային ու կլիմայական, բարենպատ պայմանների գոյությունը խոշոր նշանակություն ունի բարձր բերքատվություն ապահովելու իմաստով:

Ճիշտ և ջերմության մատակարարումը լայն արտադրական ցանքսերի գեղքում առաջմ մարդկալին ազդեցության յենթակա չե, սակայն կարելի յեւ տեղի համապատասխան ընտրությամբ և ցանքսը ժամանակին կատարելով ստեղծել այնպիսի պայմաններ, վոր կարտոֆիլի ծաղկումը տեղի ունենա ամենաբարձր ջերմություն սւնեցող ամսվա շնթացքում (Ծածկան այդ շրջանում ուշադիր պետք ել լինել վոր ջրի պակաս չզգացվի, հակառակ դեպքում մնասը խոշոր կարող ել լինել):

Մեզ մոտ, Խ. Հայտատանում, կարտոֆիլի մշակությունը մեծ մասամբ կատարվում է Լոռու, Ղարաքիլիսայի, Դիլիջանի, Նորմայագեղի, Բասարգեշարի, Դարաւագյաղի, Կոտայքի և այն լեռնային շրջաններում, ուր համապատասխան ջերմություն կա և ուր մինչև այժմ միշտ ել առատ բերք և ստացվել չնայած մշակման վոչ այնքան ուցիոնալ, գիտական ձեւերին:

ՀՈՂԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Հողի պատրաստումը չափազանց կարելոր և գյուղատնտեսության մեջ՝ ամեն տիպի բուսերի մշակման պրոցեսում, իսկ կարտոֆիլն առավել են:

Նախքան կարտոֆիլի ցանքսի կատարումը հողային այնպիսի պայմաններ պիտի ստեղծել, վոր ցանքած սերմացուն վոչ միայն ծլելու և ամելու լավագույն պայմաններով պահանջված լինի, այլ և կարողանա տալ բարձր վորակի և առատ բերք:

Հողի նախապատրաստումը արդունավետ դարձնելու համար անհրաժեշտ ե հողամասը մաքրել քարերից, մոլախոտերից, հարթել այն՝ արհեստական վոռոգում կատարելու դեպքում:

Բացի վերոհիշալից անհրաժեշտ ե հողն լենթարկել չորացման (դրենաժի), և թե նա չափազանց խոնավ ե կամ ջրառատ:

Չափազանց թաց և ճահճացման յենթակա հողերում յեթե հնարավոր չի արհեստական խողովակների միջոցով ավելորդ ջուրը հեռացնել ապա այդ կարելի լի անել հողում գութանով խոր ակոսներ բանալով: Ակոսներն արագիսի ուղղությամբ բաց պիտի անել, վոր թեքություն ստեղծվի և ջուրը հողից մղվելով դեպի ակոսները՝ նրանց միջոցով հոսի հողամասից դուրս:

Դրենաժի միջոցով հողից հեռացվում են վոչ միայն ավելորդ ջուրն ու հողի մեջ՝ յեղած թյունավոր նյութերը, վորոնք կարող են մասել նոր ցանքող բուլսին, այլ նաև հողն յենթարկվում ե աերացիալի: — բարձրանում ե ողաթափանցկանությունը:

Ողը չափազանց կարելոր և թե սերմի ծլման ու աճման համար և թե այն որգանիզմների համար, վորոնք հողում գտնվող հանքային և որդանական սննդանութերը մատչելի դարձնելու պրոցեսում հսկայական աշխատանք են տանում:

Ցամաքցված հողերում գարնանը ավելի շուտ ե ջերմություն ստեղծվում, իսկ այդ նպաստում և բուլսերի վաղահասության, ապա և բերքի բարձրացման:

Վարը: — Հողի պատրաստության իմաստով վարն և մենակարևոր գործողությունն ե: Անհրաժեշտ ե կարտոֆիլի մշակման համար հողը լավ և խորը վարել գութանով (20—25 սանտիմետր) մանավանդ տրակտորագութանով չափազանց մեծ հնարավորություն ե ստեղծվում ցանկացած ձեր ու խորության վարը կատարել: Վորքան խորն ու համեմատաբար միատեսակ ե վարն հողամասի բոլոր մասերումն, այնքան ել շատ ջուր հնարավոր ե լինում (մանավանդ ջրապակաս ջրջաններում) ամբարել հողում և այնքան ել բարինպաստ պայմաններ ստեղծել արմատները սննդառության համար: Կարտոֆիլի արմատները թե բավական խորն են տարածվում և թե լայն փակում հորիզոնական դիրքով՝ հողում:

Սակայն վարը վարիլաշերտից ավելի խորը չափարի լինի վորովնետե այդ շերտի հողը լիրես բարձրանալով լավ միջավայր չի ստեղծում արմատների համար: Նրա մեջ բացակալում կամ համարյա թե չկան որգանական նյութերը: Ցեթեւ վարփող հողի շերտը շատ բարակ ե ու չի համապատասխանում կարտոֆիլի պահանջներին, ապա այդ շերտի խորացում պիտի կատարել տարեցտարի, աստիճանաբար յուրաքանչյուր տարին մի քանի սանտիմետր խորը վարելով:

Հողը վարելուց հետո յեթե առաջանան կոշտեր անհրաժեշտ և կոշտերը փշրել զանազան տիպի փոցիների միջոցավ: Մանավանդ գարնանավարի դեպքում կոշտերի փշրումն ու հողի հարթումը գրեգիրով կամ այլ գործիքով չափազանց կարեւոր ե:

Նախքան ցանք կատարելը հողը պիտի մի փոքր «նստի», վորպեսզի լավ շփման մեջ գտնվի՝ հողի մասնիկների հետ: Դրանավ հեշտացվում ե անհրաժեշտ քանակի ջրի և նրա մեջ լուծված հանքալին սննդանութերի ներծծումը պայարների մեջ:

Անհրաժեշտ ե հողը վարել ժամանակին: Վարելու վոչ մի այն լեղանակը, այլ և ժամանակը հսկայական ազդեցություն ե թողնում բերքատվության վրա:

Վարն ընդհանրապես կատարվում ե թե վաղ գարնանը և թե աշնանը:

Առենավարը: — Համեմատաբար խոշոր առավելություններ ունի գարնանավարի հետ համեմատած: Աշնանավարը նպաստում ե՝ ջրի ավելի մեծ քանակի ամբարման, արգելում ե հողի լիրեսից հոսող ջրից առաջացած նյութերի լվացումը (վորի ընթացքում լուծված սննդանութերի կորուստ ե անդի ունենում), բարելավվում ե հողի ֆիզիկական դրությունը՝ լինթարկելով նրան սառեցման ոդի և այլ ֆակտորների ազդեցության, վաշնչացնում ե հողի լիրեսի վրա հանված միջատները, նրանց ձվերն ու հիվանդություններ առաջացնող սնկերի սաղմերը՝ լինթարկելով նրանց լուսի, ցրտի և բնական այլ ֆակտորների անբարենպաստ ազդեցություններին: Աշնանավարը նպաստում ե նաև գարնան աշխատանքների թեթևացման, արագացնում գարնան կանխացանքը, և մեծ հնարավորություն ստեղծում վարի ընթացքում հողում թաղված որգանական նյութերի փոման պրոցեսների համար:

Վաղ գարնանավարը: — միքանի թերություններով հանդերձ նույնպես ունի խոշոր առավելություններ, մանավանդ մեզ մոտ լինեալին շրջաններում: Գարնանավարը պիտք ե կատարել վաղ գարնանը, ստեղծեն վոչ այն ժամանակ, յերե հողը դեռ չատ թայ ե: Վարը պիտք ե կատարել հողի վաշ շատ թաց և վոչ ել չոր ժամանակաշրջանում: Ցերկու դեպքում ել հնարավոր չի լինում հողում լավ ֆիզիկական դրություն ստեղծել:

Հողի վարելու ժամանակը վորշելու համար անհրաժեշտ ե վերցնել մի բուռ հող և թեթև սեղսերուց հետո բաց թողնել գոտկատեղի բարձրությունից: Ցեթեւ հատիկները կավի նման չեն կպչում իրար, այլ բրնձի նման սարսուալով վար են թափվում

առաջ այդպիսի հողը վարձլու և վագույշն ժամանելու և Այսպիսի հողերը «քեզ» զբության մեջ են լինում:

Վարելուց հետո, նախքան ցանքը, չափաղանց անհրաժեշտ և հողի վերջնական պատրաստությունը: Վարը, չորացումը, փթացումը, կոշտերի ջարդելն ու հարթումը, նախքան ցանքը՝ խոշոր չափով նպաստում են հողի աերացիալին, ջրի յուրացման, ջերմության (հողի) կանոնավորման ու հողի ֆիզիկական դրության բարելավման: Իսկ այս բոլորն իրենց հերթին ազդում են պալարների ձևի, քանակի ու վորակի վրա: Յեթե վարը կատարված և աշնանը, ապա գարնանը անհրաժեշտության դեպքում պետք է կրկնահերկ կատարել:

ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄԸ

Ցուրաքանչյուր բույսի աճման համար անհրաժեշտ են վորոշ անդանյութեր: Բացի այդ, անհրաժեշտ է վոր հողում գտնվող տարրեր սննդանյութերի քանակիները վորոշ, համեմատաբար հավասարակշռված չափով գոյություն ունենան՝ վորպեսզի առաջ չգա աղերի անտագոնիզմ:

Քիմիական այն սննդանյութերը, վորոնք անհրաժեշտ են բույսերի աճման համար 10-ն են: Դրանք են՝ աղոտ, ծծումք, ֆոսֆոր, կալի, կալցի, մագնիսիա, լիգնաթ, ածխածին, թթվածին ու ջրածին:

Սրանցից մի մասը ներծծվում է հողից, Դրանք բացարձակապես անհրաժեշտ են բույսերի նորմալ աճման համար: Սրանցից վորեն մեկի բացակայությունը կամ նվազ քանակը հողում անպայմանը են աղոտը աճման վրա: Խլոր, նատրի և սիլիկա բույսերի մեջ միշտ ել գտնվում են, սակայն առանց նրանց ել բույսերը կարող են ապրել Ածխածինն ու թթվածինը բույսը վերցնում ե ողից, իսկ ջրածինը՝ ջրից՝ արմատների միջոցով: Այս յերեք ելեմնենները այնքան անհրաժեշտ են, վարքան առաջին լոթը: Սրանց մեկն ու մեկի բացակայության դեպքում բույսը չի աճում:

Սակայն վերոհիշալ բոլոր անհրաժեշտ ելեմենտներից ամենից կարեղուները համարվում են՝ ազոտը, լուսածինն ու կալին կարևոր այն իմաստով, վոր սրանց քանակը հողում համեմատաբար քիչ է, մասնավանդ ազոտի և ֆոսֆորի, և յեղածն ել շատ քիչ դեպքերում և մատչելի զբությամբ գտնվում, կալցի նույնպես

հաճախ քիչ ե լինում, սակայն սրա պակասը մեր հողերում համարված թե բոլորովին չի դացավում:

Ընդհանրապես պարաբացում կատարելիս գլխավորապես ազոտի, ֆոսֆորի և քիչ գեղքերում ել կալիի քանակն ենք տվելացնում հողում: Սակայն կարտոֆիլի նկատմամբ անհրաժեշտ ե ավելացնել թե աղոտ, թե ֆոսֆոր և թե կալի, վորովհետև կարտոֆիլը ավելի շատ կալի յե ոգտագործում:

Գիտական փորձերը ցուց են ավել վոր հեկտարին 133 ցենտներ բերք տալու դեպքում կարտոֆիլը հողից վերցնում և մոռավորապես 41,6 կիլոգրամ աղոտ 20,3 կիլոգրամ՝ ֆոսֆոր և 62,2 կիլոգրամ՝ կալի: Ինչպես տեսնում ենք կարտոֆիլը ավելի շատ կալի յե վերցնում, քան այլ սննդանյութեր: Պարաբացնելիս պիտի վերոհիշալ լերեք սննդանյութերի անհրաժեշտ քանակն ապահովել:

Մեր հողերում, սակայն, կալիի պակասն այնքան ել զգալի չի, ընդհակառական մեր հողերը հարուստ են կալիումով:

Հիմնականում կարտոֆիլի, ինչպես նաև մշակման ինթակաբույսերի հողերի պարաբացումը կատարվում է հանքային պարաբանյութերի (սուլֆեր-ֆոսֆատ, ցիանամիտ և ալն.), կանաչ պարաբացման և գոմաղբի միջոցով:

Գոմաղբը — ամենից շատ և հին ժամանակներից սկսած պարաբացման աղբուրն է հանդիսացել: Այսոր ևս նրա գործածությունը բանջարաբուծության մեջ վորպես պարաբանյութի հսկայական՝ չափերի յե հասնում — մանավանդ այն լերկրներում, ուր հանքային պարաբանյութերը զեր մուտք չեն դորձել: Հանքային պարաբանյութերի գործածության դեպքում ել գոմաղբը, մանավանդ բանջարաբուծության մեջ, չափաղանց կարևոր է վորպես որդանական նյութերի հիմնական աղբյուր:

Գոմաղբը կարևոր պարաբանյութ է միքանի նկատառուներով: Առաջին հերթին նա նրգանական նյութերի աղբյուր է: Որդանական նյութերը չափաղանց կարևոր են հողի ստրուկտուրալի բարելավման, ողափորման և ջրունակության բարձրացման տեսակետից: Ծանր կավային հողերը փխրունացվում են գոմաղբի միջոցով: Այսպիսով բարելավվում ե և նրանց ողափումն, ու մեծ նարարարություն և ստեղծվում դրենաժի, լեթե ջուրը շատ է: Ավագային հողերը նույնպես բարելավման են յենթարկվում գոմաղբի միջոցով ու բարձրանում ե նրանց ջրունակությունը:

Գոմաղբը հանդիսանում ե վոչ միայն որդանական նյութի աղբյուր, այլև հանքային նյութերի աղբյուր:

Գիտական ուսումնասիրությունները ցուց են տվել, վոր մեկ առնն գոմաղբը պարունակում ե 4,5 կիլոգրամ ազոտ, 2,2 կիլոգրամ՝ ֆոսֆոր և 4,5 կիլոգրամ կալի:

Բացի վերոհիշյալ առավելություններից գոմաղբի միջոցով դաշտ են տեղափոխվում միլիոնավոր ոդտակար որդանիզմներ։ Այս որդանիզմները տարրալուծման են յենթարկում թե հողում գտնվող որդանական նյութերը և թե այդ պրոցեսների հետեանքով առաջացած թթուների ազդեցությամբ՝ տարրալուծում ու մատչելի դարձնում հողում գտնվող հանքային պարարտանյութերը։

Վերոհիշյալ խնդիրներից յենելով պիտի ասել գոմաղբի գործածությունը բանջարաբուծության մեջ, մասնավորապես կարտոֆիլի մշակության դեպքում խոշոր դեր կարող է խաղալ Կարտոֆիլի մշակման համար անհրաժեշտ ե գործածել յուրաքանչյուր հեկտարին մոտավորապես 50 տոնն փտած գոմաղբ։

Սակայն ցանկալի ին և ամենալավ պրակտիկան պիտի համարել գոմաղբը չործածել անմիջապես կարտոֆիլի ցանքսի տարին վորովինեւ գոմաղբից կարտոֆիլը վարակվում է հիվանդություններով մանավանդ քուով։ Անհրաժեշտ է գոմաղբը գործածել կարտոֆիլից մի տարի առաջ մշակված բույսի ցանքսի ժամանակ, վորովին մինչև կարտոֆիլի ցանքսը նա տարրալուծված լինի հողում։ Սակայն վորոշ դեպքերում կարելի ին գոմաղբը տալ հենց կարտոֆիլի ցանքսի, միայն թե այդ դեպքում պետք է վերցնել անպայման փտած գոմաղբ։

Գոմաղբը պիտի տալ աշնան հերկի ժամանակ, վարպետի լրիվ փթումը կատարվի հողում։ Յերեքն ել փուում են աշնան վարած հողում և այնպես թողնում մինչև գարնանը հողի տակ տալիս գարնան կրկնահերկի ժամանակ։ Մեր կարծիքով սա լավ պրակտիկա չե։

Հանքային պարարտանյութերը անպայման պիտի ոդտագործել գոմաղբի հետ, սակայն վոչ գոմաղբը տալու ժամանակ։ Հանքային պարարտանյութերը հողին պիտի հանձնել կարտոֆիլի ցանքի ժամանակ՝ հենց կարտոֆիլը տնկելիս կամ միջանի որ առաջ։ Կան հատուկ մեքենաներ, վորոնք թե հանքային պարարտանյութեր են փուում հողում և թե միևնույն ժամանակ տնկում սերմացուն։ Հաճախ հանքային պարարտանյութերի ամբողջական

քանակը հողին են հանձնում հենց ցանքի ժամանակ, յերբեմն ել մի մասը թողնում ու տալիս հողին այն ժամանակ յերբ բոււսեր միջանի սանտիմետր հողից դուրս են դալիս։ Այս խնդիրը, իհարկե պիտի լուծել ըստ տեղական պայմանների։

Հանքային պարարտանյութերից կարտոֆիլի համար հատկապես պիտի գործածել փոսփրատու և ազոտահարուստ նյութեր։ Մեզ մտ գործածվում են սուլպեր-փոսփատ, ցիանամիտ և ալին։ Մրանք ավելի շատ պակաս են մեր հողերում քան կալի։

Գոմաղբով պարարտացնելիս անհրաժեշտ ե կարտոֆիլի համար գործածել թե սուլպեր-փոսփատ (մոտ 200 կիլո) և թե ցիանամիտ (100 կիլո), սակայն այն դեպքում, յերբ գոմաղբի պակաս և զգացվում 300—350 կիլո լուրաքանչչուրից կարելի յե գործածել իսկ կանաչ պարարտացման միջոցով լրացնելով գոմաղբի պակասը։ Հաճախ կարելի յե և կանաչ պարարտացում շտալ։

Կանաչ պարարտացումր։ Գոմաղբից զատ հողն որդանական նյութերով հարստացնելու համար գործածվում ե նաև կանաչ պարարտացումը։ Այդ նշանակում ե հողամասի վրա աճեցնել վորոշ բոււսեր մի առ ժամանակ և ազա վարի միջոցով թաղել հողում՝ (աշնանը), վորից հետո նա փառում և հողում և ծառացում թե վորպես սննդանյութ և թե վորպես որդանական նյութի աղբյուր։

Մեզ մոտ, Խ. Հալաստանում, այս տիպի պարարտացում համարյա թե չկա, սակայն գիտական փորձերը ցուց են տվել վոր գոմաղբի բացակալության դեպքում կանաչ պարարտացումը լավագույն միջոցն ե համարվում հողը որդանական նյութերով հարստացնելու տեսակետից։ Այն՝ շրջաններում, ուր գոմաղբի պակաս և զգացվում, այդպիսի շրջաններում կանաչ պարարտացումը հողը հարավոր և այդ պակասը լրացնել։

Վորպես կանաչ պարարտացման նյութ, մանավանդ կարտոֆիլի համար, չափազանց նպատակահարմար են թիթեռնածաղիկներին պատկանող բոււսերը։ Մրանք թե՛շատ ու խորաթափանց արմատներ ունեն (վորոնք փիլունացնում են հողը) և թե կարճ ժամանակում մեծ քանակությամբ կանաչ մասս են աբտադրում վորոնք հողում թաղվելուց հետո առատ որդանական նյութ են հանդիսանում ու փտում։ Բացի սրանից այս տիպի բլուսերի արմատների պալարներում ապրող միկրոորդանիզմները հարստացնում են հողը ողից վերցրած ազոտով։

Կանաչ պարաբռացում կատարելիս ցանված բույսերը գործ բարձրության հասնելուց հետո միայն պիտի (մինչև ծաղկումը), վարել ու թաղել հողում աշխանը: Այսպիսով մինչև զարնացանքը նա կփառ: Վորպես կանաչ պարաբռանլութ գործածում են զանազան ահսակի յերեքնուկներ, լորի, վոլորն, վիկա և ալին:

ՑԱՆՔՍԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ

Ցանքսաշրջանառությունը ունի խոշոր առավելություններ մանավանդ բանջարտրուծության ընագալառում: Միևնույն բույսի մշակումը նույն հողամասի վրա վոչ միայն միակողմանի սպառման և լինթարկում հողը, այլ և շատանում են այդ հողում տվյալ բույսի վրա աճող հիվանդությունները:

Կարտոֆիլի մշակման գեղքում ցանքսաշրջանառության միջոցով հնարավոր և կոնտրոլի լինթարկել «կարտոֆիլի քում և «ըիզոկտոնիա» կոչված հիվանդությունները, վորոնք հողի մեջ են ապրում (ձմեռում): Մեկ կամ մի քանի տարի յեթի այդ հիվանդություններով վարակված հողամասերում կարտոֆիլչցանվի, այդ հիվանդություններն պատճառող որդանիզմները կվոչնանան: Մի շարք կրծող միջատներ նույնպես հնարավոր և սովամահության լինթարկել ցանքսաշրջանառության միջոցով:

Կարտոֆիլի համար մի վորեե ցանքսաշրջանառության ձև բույս շրջանների համար չի կարելի թելարել: Յուրաքանչյուր շրջանում, ուր կարտոֆիլ և մշակվում, անհրաժեշտ և այդ շրջանի հողալին և կիմայական պայմաններից լինելով մշակել ցանքսաշրջանառություն:

Ընդհանրապես լուրաքանչյուր ցանքսաշրջանառության ձևը ոգագործելիս չափազանց կարեոր և լորիացեղին պատկանող բույսերից մտցնել ցանքսաշրջանառության մեջ, վորովճետե, ինչպես տեսանք վերևում, սրանց արմատների ուռուցիկների մեջ ապրող որդանիզմները ողից վերցրած աղոտով հարստացնում են հողը:

Մեղ մոտ, ցանքսաշրջանառության ընթացքում վորպես ալդ պիսի կուլտուրա պիտի ոգագործել լորի, վիկա, մալ, վոլոր և ալին:

Այս կուլտուրաների ոգտագործումը, լիթե կիմայական ու հողալին պայմանները թույլատրում են, չափազանց մեծ նշանակություն կունենան վոչ միայն կարտոֆիլի բարձր բերք ապա-

հովելու իմաստով, այլև անասնապահական սոցիալիստական խոշոր անտեսությունների ամրապնդման իմաստով:

Կարտոֆիլի մշակությունը մեղ մոտ, և. Հայաստանում. ընդհանրապես կատարվում և լիոնային անասնապահական շըրջաններում, հետեւապես ցանքսաշրջանառության այնպիսի ձեռք պիտի կիրառել, վոր հնարավոր լինի նաև անասունների կերի ապահովման խնդիրը: Այս իմաստով վերև հիշված բույսերից զատ լեզվատացորենն ու արեածաղիկը, վորպես սիլոսային բույսեր, նույնպես շատ անգամ անհրաժեշտ կլինի մտցնել կարտոֆիլի ցանքսաշրջանառության մեջ:

Լավ, պարաբռ հողերում լերբեմն մի քանի տարիներ շարունակ կարտոֆիլի կարելի եցանել: Իրապես նույսատանում յիշեմն մինչև հինգ և ավելի տարիներ նույն հողում կարտոֆիլ են ցանքում:

Սակայն ավելի լավ և անցնել ցանքսաշրջանառության: Առվայլ գործածելիս կարելի յեւ և անհրաժեշտ 3-5 և գուցե ավելի տարիներ հողը թողնել առվույտի տակ և խոտ ստանալ: Այսպես 1-ին տարին՝ կարտոֆիլ 2 ըդ տարին՝ առվույտ և գարի կամ ցորեն խառն, ապա 4-րդ, 5-րդ, գուցե և 6-րդ տարիները միայն առվույտ: Ա. սպիսով առվույտը գուցե և բերվում իրրեւ ցանքսաշրջանառությունից գուրս. (ВЫВОДНОЙ КЛИН):

Յերեքնուկ գործածելիս կարելի յեւ 1-րն տարին ցանել կարտոֆիլ 2-րդ տարին՝ գարի և լերեքնուկ միասին, 3-րդ տարին (գուցե և չորրորդ) լերեքնուկ մենակ (խոտ) և ապա աշնանավար հաջորդ տարվա կարտոֆիլի համար:

Վիկա, լորի, վոլորն, արեածաղիկ, յեզիկատացորեն և ալին ոգտագործելիս կարելի յեւ ավելի կարճ ժամանակաշրջան ունեցող ցանքսաշրջանառություն կատարել: Այսպես 1-ին տարին կարտոֆիլ, 2 ըդ տարին վիկա և գարի և 3-րդ տարին սիլոսային մի վորեե բույս:

Ցանքսաշրջանառության մեջ գոմաղբով պիտի պարաբռացենել խոտով զբաղված գալու, այսպիսով բարձրանում և խոտի քանակն ու վորակը, մինչև կարտոֆիլի ցանքսը նա կփառ հողում և նրա մեջ լիղած հիվանդությունների սաղմերը մինչև կարտոֆիլի մշակման տարին գուցե վոչնչանան խոպառ:



ՍԵՐՄԱՑՈՒՆ

Նախքան լավորակ սերմացուի մասին խոսելը անհրաժեշտ ե
մի քանի խոսք ասել կարտոֆիլի փոփոխակների, սորտերի
մասին.

Դժբախտաբար մեղ մոտ, Խ. Հայաստանում, կարտոֆիլի
(սորտավորումը) տեսակավորում համարլաթե չկա: Մեղ մոտ կար-
տոֆիլը, կարտոֆիլ ե կամ ամենաշատը «վազահաս» և «ուզահաս»
տերմիններով են բնարողվում մեր կարտոֆիլի փոփոխակները:
Գործածվում են նաև «Աղարանի կարտոֆիլ» «կոռվա» «Սեանի»
և «Կոտաքի կարտոֆիլ» և այլն:

Կարծես Աղարանում մշտկվող կարտոֆիլն իրենից ներկա-
